



Հայաստանի կենսաբ. հանդես, 2(69), 2017

ՀԱՎԵՐԻ ԱՍԿԱՐԻԴԻՈԶԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ԶԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Յ.Յ. ՆԱՂԱՇՅԱՆ, Լ.Յ. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Ո. ՀԱԿՈՔՅԱՆ,
Ս.Վ. ԵՐԻՔԵԿՅԱՆ, Վ.Լ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
naghov@rambler.ru

Արմավիրի, Արարատի Արագածոտնի, Կոտայքի մարզերի և Երևանի շրջակայքի անհատական թռչնաբուծական տնտեսություններում 2016 թ. տարվա բոլոր եղանակներին կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ մինչև մեկ տարեկան հավերը վարակված էին ասկարիդիոզով, որը խիստ բացասական է ազդում դրանց աճի և զարգացման, ինչպես նաև հետագայում դրանց մսային և ձվային մթերատվության վրա:

Ասկարիդիոզ – հավեր – կլոր որդեր – տարածվածություն

В результате паразитологических исследований, проведенных в зимне – весенний и осенне – летний периоды 2016 г. в частных птицеводческих хозяйствах, располагающихся вокруг Еревана, а также в Армавирской, Арагацотнской и Котайской марзах Армении, было выявлено, что куры до годовалого возраста в основном заражены аскаридозом, что отрицательно сказывается не только на их росте и развитии, но и снижает продуктивные качества мясных и яичных пород.

Аскаридоз – куры – нематоды – распространенность

As a result of research carried out in winter – spring and autumn – summer 2016 in a private poultry farms located in the territories. It was around the city of Yerevan and in Armavir, Aragatsotn and Kotaik Marzes of Armenia, have been identified that chickens until one year of age are mostly infected with ascariidiosis that not only affects their growth and development, but also reduces the productive qualities of meat and egg breeds.

Askariidiosis – chickens – nematodes – spreading

Ժամանակակից թռչնաբուծության կարևոր հիմնախնդիրներից է հանդիսանում թռչունների տարբեր պահվածքի պայմաններում ինֆեկցիոն և ինվազիոն հիվանդությունների կանխարգելումը, մսային և ձվային մթերատվության բարձրացումը:

Հայաստանում թռչունների հիվանդությունների կառուցվածքում զգալի տեղ են զբաղեցնում ինվազիոն հիվանդությունները՝ հատկապես հելմինթոզները: Այդ հիվանդությունները հիմնականում տարածված են մանր, անհատական թռչնանոցներում:

Հելմինթոզներից թռչնաբուծությանը առավելապես մեծ վնաս է պատճառում կլոր որդերի կողմից հարուցվող ասկարիդիոզը: Վերջինիս տարածմանը նպաստում են ազատ հատակային պահվածքը, հողում հարուցիչ ձվերի կենսունակության երկարատև պահպանումը և կերակրման ու պահվածքի նորմերի խանգարումները, կլիմայական գործոնները և այլն [6, 7, 9-13]:

Հայտնի է, որ ասկարիդիոզով առավել հաճախ վարակվում են հավերը: Հիվանդության հարուցիչը *Ascaridia galli*-ն է, որը պատկանում է Ascaridae ընտանիքին և տեղակայվում է թռչունների բարակ աղիներում՝ առաջացնելով տարաբնույթ ախտաբանական փոփոխություններ: Հարուցիչի ձվերի տարածմանը նպաստում են հիվանդ թռչունները, ինչպես նաև դրանց պահեստային տերերը՝ անձրևաորդերը: Ասկարիդիոզի հետևանքով ընկնում է հավերի մսային և ձվային մթերատվությունը, դանդաղում է մատղաշների աճն ու զարգացումը, և որ ամենակարևորն է, որդերը ազդում են հավերի օրգանիզմի հոմեոստազի վրա՝ առաջացնելով երկրորդային իմունոդեֆիցիտներ, դիսբակտերիոզներ և այլ անցանկալի ախտաբանական փոփոխություններ [2-5, 8]:

Ելնելով վերոհիշյալից, աշխատանքի նպատակն էր Հայաստանի մի քանի մարզերի մանր, անհատական թռչանոցներում ուսումնասիրել հավերի ասկարիդիոզի տարածվածությունը ըստ տարվա եղանակների:

Լյուրև և մեթոդ: Հավերի ասկարիդոզի տարածվածությունը ուսումնասիրվել է 2016 թ. տարվա բոլոր եղանակներին՝ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի մարզերի և Երևանի շրջակայքի անհատական թռչանոցների տնտեսություններում: Ընդհանուր առմամբ հետազոտության են ենթարկվել մինչև մեկ տարեկան 333 թև թռչնի կղանք՝ ըստ տարվա եղանակների: Հետազոտությունը կատարվել է մակաբուժաբանությունում ընդունված Ֆյուլեբոռնի մեթոդով [1]: Ինվազիայի էքստենսիվությունը որոշելու նպատակով ծայրահեղ հյուծված թռչունները մասնակի հելմինթոլոգիական հերձման են ենթարկվել և որոշվել է աղիներից հանված *Ascaridia galli* որդերի քանակը: Ստացված թվային տվյալները ենթարկվել են վիճակագրական մշակման՝ նկարագրական վիճակագրության մեթոդով:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտված թռչունների կղանքում ձմռանը հարուցիչների ձվեր չեն հայտնաբերվել:

Ըստ մարզերի հավերի ասկարիդիոզով վարակվածությունը գարնանը ուներ հետևյալ պատկերը. Արարատի մարզում այն կազմում էր հետազոտված հավերի 83,3 %, Արագածոտնի մարզում 70 %, իսկ Արմավիրի, Կոտայքի և Երևանի շրջակա տնտեսությունների հավերը 100 % վարակված էին ասկարիդիոզով (աղ 1):

Հատկանշանակ է, որ ամռան և աշնան ամիսներին նշված մարզերի բոլոր թռչունները 100 % վարակված էին ասկարիդիոզով:

Գարնանը բոլոր մարզերի մասնակի հելմինթոլոգիական հերձման ենթարկված թռչունների բարակ աղիներում միջին հաշվով հայտնաբերվել են 11,0 հատ ասկարիդներ, ամռանը՝ 31,0 և աշնանը 22,0 հատ: Ինվազիայի էքստենսիվությունը գարնանը կազմել է 91,4 %, իսկ ամռանը և աշնանը 100 %:

Աղյուսակ 1. Հավերի ասկարիդիոզով վարակվածության ցուցանիշները ըստ տարվա եղանակների $M \pm m$

Ցուցանիշները	Ըստ տարվա եղանակների		
	Գարուն	Ամառ	Վշուն
Հետազոտված թռչունների քանակը ըստ տարվա եղանակների	18.6±1.16	22.2±1.15	25.8±0.73
Վարակվածների քանակը ըստ տարվա եղանակների	16.8±0.45	22.2±1.15	25.8±0.73
Մեկ թռչնի մոտ հայտնաբերված որդերի քանակը	11.0±2.5	31.0±4.22	22.0±1.02
Ինվազիայի էքստենսիվություն	91.4%	100%	100%

Հարկ է նշել, որ հետազոտված բոլոր մարզերում ասկարիդիոզով հիմնականում վարակված էին մինչև մեկ տարեկան թռչունները:

Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ թռչունների առավելագույն վարակվածությունը ասկարիդիոզով արձանագրվում է ամռան-աշնան եղանակներին, որը, հավանաբար, կախված է կլիմայական գործոններից և պահվածքի պայմաններից:

Հետաքրքիր տվյալներ են ստացվել ձմռանը կատարված հետազոտությունների ժամանակ: Չնայած այն հանգամանքին, որ ձմռանը թռչունների կղանքում հարուցիչի ձվեր չեն հայտնաբերվել, սակայն արտաքսնային հյուծված թռչունների մասնակի հելմինթոլոգիական հերձման ժամանակ աղիներում հայտնաբերվում էին ասկարիդներ, որոնք իրենց չափսերով

կրկնակի անգամ փոքր էին տարվա այլ եղանակներին առանձնացված որդերից, որի հետևանքով էլ հիվանդ հավերի կղանքում ասկարիդների ծվեր չէին հայտնաբերվում: Այս երևույթը, հավանաբար, պայմանավորված է ձմռան ամիսներին կանաչ կերի բացակայությամբ և թռչնանոցներում առկա ցածր ջերմությամբ, որի հետևանքով հավերի մոտ արձանագրվում է մասնակի հյուժվածություն և վերարտադրողական ֆունկցիայի խանգարում:

Այսպիսով, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի մարզերի և Երևանի շրջակայքի անհատական թռչնաբուժական տնտեսություններում 2016 թ. տարվա բոլոր եղանակներին կատարված հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ մինչև մեկ տարեկան թռչունները վարակված էին ասկարիդիոզով, որը խիստ բացասաբար է ազդում նրանց աճի և զարգացման, ինչպես նաև մատուցության և ձվատվության վրա:

Չետազոտությունները կատարվել են ՉՉ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային՝ 15T-4A030 ծածկագրով թեմային շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Նադաշյան Ֆ.Չ.* Կենդանիների իվագիտի հիվանդություններ: Երևան, էջ 9, 2006:
2. *Адильханова Т.Х.* Гельминты и гельминтозы домашних птиц Дагестанской АССР и меры борьбы с ними: Автореф. дис. канд. вет. наук. Баку, 22 с., 1971.
3. *Артамонова С.В.* О паразитировании аскаридий, капиллярий и кокцидий в кишечнике цыплят. Ветеринария. № 8., с. 48-49, 1969.
4. *Афтахов К.А.* Вопросы эпизоотологии и профилактика аскаридоза кур в промышленном птицеводстве Башкирии: Автореф. дис. канд. вет. наук. Уфа, 19 с., 1976.
5. *Корнишина М.Д.* Аскаридоз кур в Татарской АССР, его распространение, иммунитет, диагностика, терапия: Автореф. дис. . канд. вет. наук. Казань, 19 с., 1973.
6. *Одилова М.К.* вопросу распространения аскаридоза кур на Самаркандской птицефабрике. Тез. докл. науч. конф. по паразитологии. Самарканд, Тай ляк, 1971.
7. *Шарипова З.М., Тарасовская Н.Е.* Фаунистический и таксономический обзор паразитов домашних птиц в личных хозяйствах сельских населенных пунктов Железинского района Павлодарской области. Биологические науки Казахстана. Паразитология. Павлодар. № 1, с. 106-113, 2007.
8. *Хазиев Г.З.* Зависимость биоценологических взаимоотношений аскаридий и гетеракисов от вида птиц. I Всес. съезд паразитоценологов. Тезисы докладов. Киев: Наукова думка, ч. 2., с. 112-113, 1978.
9. *Daş G, Abel H, Savaş T, Sohnrey B, Gaily M.* Egg production dynamics and fecundity of *Heterakis gallinarum* residing in different caecal environments of chickens induced by fibre-rich diets. *Vet Parasitol.* Oct. 15, 2015, 3-4, 606-618, 2014.
10. *Daş G, Gaily M.* Response to *Ascaridia galli* infection in growing chickens in relation to their body weight. *Parasitol Res.* May, 113, 5, 1985-1989, 2014.
11. *Gaily M, Bauer C, Preisinger R, Erhardt G.* Genetic differences of *Ascaridia galli* egg output in laying hens following a single dose infection. *Vet. Parasitol.* Jan 3, 103, 1-2, 99-107, 2002.
12. *Malatji DP, Tsoetsi AM, van Marle-Koster E, Muchadeyi FC.* Population genetic structure of *Ascaridia galli* of extensively raised chickens of South Africa. *Vet. Parasitol.* Jan 30, 216, 89-92, 2016.
13. *Wegner K, Lambertz C, Daş G, Reiner G, Gaily M.* Climatic effects on sow fertility and piglet survival under influence of a moderate climate. *Animal.* Sep; 8, 9, 1526-1533, 2014.

Ստացվել է 14.02.2017